

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

Ծայրագույն վարդապետական աստիճանը Հայ Եկեղեցու նվիրապետական կարգի կարևոր գիտական աստիճաններից մեկն է: Ծայրագույն վարդապետի պաշտոնը, ինչպես նշվում է Ձեռնադրության Մաշտոցում, «...է՝ ունելով զուսումն վարդապետութեան և զգիտութիւն Հին և Նոր Աստուածային Կտակարանաց, և զդաւանութիւն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ ի սուրբ Երրորդութեանն և ի մարդեղութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ առնել զքեմբասացութիւնս և ծագէ ի ծագ քարոզել»:

Սույն թվականի սեպտեմբեր ամսին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երկու երիտասարդ միաբաններ, Էջմիածին քաղաքի վանորեից տեսուչ հոգեշնորհ Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանն ու Ս. Հռիփսիմե վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանը Մայր Աթոռի դիվանին էին ներկայացրել իրենց թեզերը, ստանալու համար ծայրագույն վարդապետական աստիճան:

Այս առթիվ կազմվել էր քննիչ հանձնախումբը՝ նախագահությամբ Եգիպտահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի: Հանձնախմբի անդամներ էին Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Պարգև Շահրազյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Երվանդ Մելքոնյանը: Քննիչ հանձնախումբը, քննելով և բարձր գնահատելով ներկայացված գրավոր աշխատությունները, իր դրական կարծիքն էր հայտնել և խնդրել Վեհափառ Հայրապետին՝ թույլ տալու հոգեշնորհ վարդապետներին՝ հանդես գալու իրենց թեզերի բանավոր պաշտպանությամբ:

Հոկտեմբերի 1-ին, շաբաթ օրը, Քրիստոսի յոթանասուներկու աշակերտների տոնին, առավոտյան ժամը 10.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, տեղի ունեցավ Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանի և Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանի ներկայացրած ծայրագույն վարդապետական թեզերի բանավոր պաշտպանությունը:

Հանդիսությանը նախագահում էր Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Նախագահության սեղանին տեղ էին գրավել Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը, Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը:

Հանդիսությանը ներկա էին նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Տերունական աղոթքից հետո բացման խոսքով հանդես եկավ քննիչ հանձնախմբի նախագահ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը: Ապա քննիչ հանձնախմբի անդամ պրն. Մելքոնյանը ունկնդիրներին ներկայացրեց Տ. Ասողիկ վարդապետի աշխատության մասին քննիչ հանձնախմբի եզրակացությունը, ուր բարձր էր գնահատ-



Տ. Թորգոմ արքեպս. Մամիկոնյանը Ս. Նարեկ և Ս. Պարգև դպրոցների վարչական ներկայությամբ

վում կատարված աշխատանքը և, միաժամանակ, նշված էին տեղ գտած թերությունները:

Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանի ծայրագույն վարդապետական թեզի թեման էր՝ «Արարչագործության թեման Աստվածաշնչում, և նրա ժամանակակից ընկալումը»:

Իր թեզի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ հոգեշնորհ հայր սուրբը:

Ապա պրն. Շահբազյանը ներկայացրեց Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանի աշխատության մասին քննիչ հանձնախմբի եզրակացությունը, գոհունակություն հայտնելով կատարված աշխատանքի վերաբերյալ, միաժամանակ նշելով եղած թերությունները:

Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանի ծայրագույն վարդապետական թեզի թեման էր՝ «Աստվածճանաչումը ըստ քրիստոնեական ավանդության և միստիկական ուսմունքների՝ յոգայի, թեոսոֆիայի և անտրոպոսոֆիայի»:

Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանը հանդես եկավ իր թեզի բանավոր պաշտպանությամբ:

Ծայրագույն վարդապետական թեզերի բանավոր պաշտպանությունից հետո շնորհավորական խոսք ասաց Վեհափառ Հայրապետը, նշելով ծ. վարդապետական աստիճանի դերն ու կարևորությունը Հայ Եկեղեցում:

Հոկտեմբերի 8-ին, շաբաթ.—Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն:

Այսօր, առավոտյան ժամը 11.00-ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, հանդիսադրությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, սկսվեց Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանի և Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանի ծայրագույն վարդապետական աստիճանի տվչության հանդիսավոր արարողությունը՝ ըստ Հայաստանյայց Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի:

Հանդիսավոր արարողության խարտավիլակի պաշտոնը ստանձնել էր Արգենտինայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը:

Արարողությանը մասնակցում էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հունահայոց թեմի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը, Մայր Աթոռի հոգեշնորհ հայրեր, Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևորականությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը:

Տվչության արարողության ավարտին, ի շնորհավորումն նորընծա ծայրագույն վարդապետների, ձեռնադրիչ սրբազան հայրը խոսեց հետևյալ իմաստալից խրատական քարոզը.

«Այսօր նշանակալից է, որ կկատարվի ծայրագույն աստիճանի տվչությունը երկու պատվական միաբաններում Էջմիածնի Մայր Աթոռի: Այսօր տոնն է սրբոց Թարգմանչաց և սրբոց Թարգմանիչներու ներկայացուցիչները միայն պիտի հիշատակենք: Մեսրոպ Մաշտոցը, որ տվավ հայ ժողովուրդին իր տառերը, որպեսզի ան կարողանա կարդալ իր լեզվով աստվածային Խոսքը, նաև իմաստության խոսքերը պատմության բոլոր իմաստուններում: Այս տաճարը կանգնած է գերեզմանին վրա Սուրբ Մեսրոպ Մաշտոցի: Եղիշե պատմիչը, որ մասնակցեցավ Վարդան զորավարի ճակատամարտին 451 թվականին պաշտպանելու համար իր հայրենիքը, պաշտպանելու համար իր հավատքը: Մովսես Քերթողը, որ եղավ առաջին արձանագրողը մեր ժողովրդի՝ գրելով մեր ժողովուրդին պատմությունը, ինչպես նաև ամբողջ ազգերու և աշխարհի պատմությունը սկիզբեն մինչև իր օրերը: Եվ 5-րդ դարու շարքին կավելնան Գրիգոր Նարեկացի աղոթասացը, որ խոսեցավ իր հոգիեն Աստուծո հետ և մեր բոլորին անունով. ըսելով՝ «Խօսք ընդ Աստուծոյ»: Եվ սորվեցուց թե ինչպես կարելի է խոսիլ Աստուծո հետ ընդունելով մեղավորությունը մարդուն, բայց հուսահատության մեջ չիյնալով: Հույսը ունենալով, որ նորեն Լույսը պիտի տեսնե, իմաստությունը պիտի ունենա, կամքը պիտի ունենա ինքզինքը նորոգելու, լավագույնին հասնելու: Եվ Ներսես Շնորհալի հայրապետը, որ եղավ մեր Եկեղեցվո բանաստեղծ, երաժիշտ, բարեկարգիչ հայրապետը և մեր արարողություններու մեջ ամեն օր, որ կերգենք, Ներսես հայրապետի ձայնը երգը, խոսքը, հոգին մեզ կառաջնորդե: Եվ այս թարգմանիչներու ետևեն եկան դարեդար բոլոր ուսուցանողները, բոլոր վարդապետները, քահանաները, երգիչները, ճարտարապետները, գրողները, բոլոր հանճարները մեր ժողովուրդին: Այսօր տոնն է մեր բոլոր հանճարներուն: Եվ կաղոթենք, որ անոնց շարքին ավելնան նաև այս երկու համեստ, նվիրյալ աշխատավորները այս Եկեղեցիին, ծառաները Աստուծո. իրենց տրված ծայրագույն վարդապետի աստիճանը ծանր բեռ կդնե իրենց վրա, որ-

պեսզի կարողանան իմանալ նպատակը կյանքին, այնպես՝ ինչպես Աստված տված է մարդուն: Եվ Աստուծո կամքը մենք կը-սորվինք Աստվածաշունչ գիրքեն: Կսորվինք մեր հայրերու կյանքեն, կսորվինք մեր իմաստուններու մեզի տված խրատներեն: Անոր համար աղոթքի մեջ ըսի, Աստված իմաստություն տուր այս երկուքին ևս որ կարենան զմայլիլ, հիանալ, սքանչանալ, ծաղկազարդվիլ շնորհքներով: Զմոռնան, որ իրենց պարտականությունն է նախ սորվիլ, հետո սորվեցնել: Նախ ապրիլ՝ հետո փրկել ուրիշները: Եվ այս ծանր պարտականությունը կթեթևանա, երբ չհրաժարինք, երբ չուրանանք մեր հավատքը, մեր համոզումները, ընդհակառակը աղոթքը կըսեր «Քաջությունը ունեցեք բոլոր անոնց, որոնք ապրեր են և կատարել այնպես, ինչպես Աստուծո կամքն է: Հեզությամբ, խոնարհությամբ, բայց նաև համարձակությամբ, առանց վախնալու, առանց մարդոց երեսը միայն նայելու, որ կնշանակե շողոքորթություն ընելու, կաշառք ուտելու և բոլոր մյուս չարիքներեն, որոնք կկործանեն անհատը, կկործանեն ընկերությունը: Այսպիսի ծանր պարտականություն դրվեցավ այսօր մեր այս երկու եղբայրներու վրա: Բայց անոնք ունին մեր բոլորին աղոթքը իրենց հետ, ունին մեր բոլորին հավատքը, որ կավելնա իրենց հավատքին վրա և երբեք առանձին պետք չէ զգան, երբեք հուսահատությունը տեղ պետք չէ գտնե իրենց մտքին, սրտին և հոգիին մեջ: Եվ այդպիսով անոնք շարունակողները պիտի ըլլան այն բոլոր թարգմանչաց հույլին, խումբին, որ սկսավ Ս. Գիրքի թարգմանությամբ 404 թվականին, ստեղծելով, կարգավորելով մեր ժողովրդին Այբ և Գիմ-ը, թարգմանելով՝ ինչ որ կարելի էր թարգմանել, որպեսզի մեզմե ամեն մեկը իր շունչով կարդա և իր հոգին այդ շունչով լեցվի:

Աղոթենք, որ Տերը ընդունի մեր այս երկու՝ Ասողիկ և Պարգև ծայրագույն վարդապետներու նվիրումը, ծառայելու հոգին: Եվ զիրենք ծաղկեցնե իբրև պտղալի ծառ ի տան Աստուծո՝ մեր Ս. Եկեղեցիին և ազգին մեջ, ազգին և Աստուծո փառքին համար, ամեն»:

Հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետին և Տ. Պարգև ծայրագույն վարդապետին շնորհավորեցին նաև արարողությանը ներկա սրբազան հայրերը, միաբանակից եղբայրները, ուսանողությունը, ինչպես նաև բազմաթիվ ուխտավորներ:

Հավարտ ծայրագույն վարդապետական աստիճանի տվչության արարողության, թարգմանչաց մեծ տոնի առթիվ, Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան աբղ. Հովհաննիսյանը:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծա ծայրագույն վարդապետներին, հաջողություններ մաղթելով նրանց՝ գիտական ու կրոնական հետագա իրենց գործունեության համար:

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՂ. ՄԿՐՏՉՅԱՆ